

երբ տեսաւ թէ թշնամին յանկարծօրէն յարձակած է իւր զօրաց վրայ, դիմեց անոնց օգնութեան. բայց կէս ճանապարհին բախեցաւ Արշակայ բանակին:

Տեղւոյ նկատմամբ Եւսեբիոս կը բաւականանայ ըսել «յանձուկ տեղի», զոր մեր խմբագիրը կը թարգմանէ «ի նեղ վայրի»: Եւսեբեայ «յանձուկ տեղին» կ'ենթադրէ անտարակոյս կիրճ մը, ուր Անտիոքոս բախելով Արշակայ յաղթ բանակին, կը ստիպուի ձակատ տալ:

Ը. «Եւ ոչ կարեն զօրել. սպառն զգօրն, զարկանեն ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ եւ սպանանեն». Եւսեբ. «եւ սաստկացուցանէր զպատերազմն (եւ) խոցեալ անկեալ մեռանէր»: Յուստիոնոս կը գրէ. «Չճանապարհայն ընդ առաջ ել նորա թագաւորն Պարթեւաց. ընդ որում հզօրագոյն քան զգօրս նորա մարտ եղեալ կուէր: Այլ ի կատարածին իրրեւ յաղթեցին քաջութեամբ թշնամիք, լքեալ յիւրոցն խուճապելոց՝ սպանաւ» (ԼԸ. 10): Եւսեբեայ «սաստկացուցանէր զպատերազմն» մութ է. խմբագիրը ընդլայնած է, բայց զարձեալ մթութեան մէջ թողլով նախագասութիւնը. պէտք է իմանալ. «Եւ ոչ կարեն զօրել Անտիոքեանք զգէմ ունել զթշնամեացն. եւ Արշակեանք սպառն զգօրն Անտիոքայ»: Անտիոքոսի մահուան պարագան հին պատմագիրք պէսպէս կ'աւանդեն. Ապպիանոս կ'ըսէ թէ Անտիոքոս երբ տեսաւ թէ կորանցուց պատերազմը՝ ինքնասպան եղաւ: Եղիանոս «ժայռէ մը զահալէժ եղաւ» կ'ըսէ. Եւսեբիոս, որ այլուր (Բ. 244) «Արշակ պարթեւ զԱնտիոքոս սպանանէ» կը գրէր, այս տեղ կ'արտայայտուի «խոցեալ անկեալ մեռանէր». զոր կը յարասէ խմբագիրը. «զարկանեն, ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ եւ սպանանեն». ուր նկատի առնուած կ'երեւայ նաեւ «Արշակ պարթեւ զԱնտիոքոս սպանանէ»:

Թ. «Եւ ձերբակալ առնեն զՍելեւկոս զորդին Անտիոքայ, զոր ունէր, ասէ, արքայ ի դրանն իւրում թագաւորաբար»: Ինչպէս զինակ մը, որ Եւսեբիոսն է. կը գրէ սա. «Իսկ զնորին (զԱնտիոքայ) որդի զՍելեւկոս... կալեալ Արշակայ արքայի տանէր գերի յայտնի է:

Բաւական են համեմատութիւններս կազմելու համար համոզում, թէ հատուածս իւր ամբողջութեան մէջ անհարազատ է, խմբագրէ մը, որ ապրած է հաւանօրէն Ը. զարու մէջ, յամենայն դէպս 650էն ետքը:

(Շարունակելի:)

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



### ՀԻՆ ՀՈՅՈՍՏՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍՈՒՄՆԵՐ ՓՈՔՐ-ՀԱՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԱՍԽԱՆ)

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

(Շարունակելի:)

Այս վարքն է «Վկայութեան ԽՆ. վկայիցն Բրիտանոսի որք ի Նիկոպոլիս Հայոց կատարեցան»<sup>4</sup>: Այս զինուորք էին, կ'ըսուի, զնդէն «որ կոչիւր Լեզէոն Հայոց, ի Նիկոպոլիս քաղաք որ ի Փոքր-Հայոս»: Գլխաւորքն են զարդաք որ ի Փոքր-Հայոս: Գլխաւորքն են Ղեւոնդիոս, Սիսիանոս, Մաւրիկիոս, Դաւիթ, Անտոնիոս եւ Անիկոս: Յատկապէս կը թուած էր Ղեւոնդիոս: Դատարարութեան էր Ղեւոնդիոս: Դատարարութեան էր Ղեւոնդիոս կը զրուին Նիկոպոլոյ «զղեկի» ետքը բանտ կը զրուին Նիկոպոլոյ «զղեկի» մէջ «ի հարաւակողման աշտարակի քաղաքին, ընդ որ ելանէր աղբիւր՝ հոսեալ արտաքոյ ընդ որ ելանէր քաղաքին»: Պահպանութիւնը կը յանձնուի «երկուց ի վիսաւորաց զօրականին» (— ասոնք «եզիպտացիք էին յազգէ» —): Ղեւոնդիոս կը քաջալերէ ընկերները, կը պատմէ նահատակաց վարքերը, յատկապէս «ընհատակութիւն սրբուհոյն մերմէ եկեղոր լուայ, ասէ, ի վարդապետէն՝ հայ զնդերը լոյ յեզիպտոսէ»: (Չմոռնանք՝ հայ զնդերը ըլլային ընկերներէ եւ բուն Հայաստանէ շատ յաճախ եզիպտոս կը բանակէին՝ հոռոմէական շրջանին:) Ամառ էր եւ տաքին՝ վկայք կը պապակէին, եւ արգելուած էր ջուր ու հաց: «Կին ոմն բարեպաշտօն Բասիանէ ա-նուն՝ արկեալ զիւրեւ կրկնոց լայն եւ աման նուն՝ արկեալ զիւրեւ մտանէր ի բանտ» ջրոյ ի ծոց իւր թագուցեալ՝ մտանէր ի բանտ» եւ զազտ ջուր կու տար: Արդ երբ բարձրաս-տիճան մը՝ փրկինոս՝ վկայից քոֆը էր, եւ Բասիանէ եկած էր, բայց «արգելին զնա պա-հապանք դրանն» իսկ վկայք կը հարցնէին «եթէ ունիցի՞ ջուր», եւ ունի. «վասն մեր-Ս. Ղեւոնդիոս խօսեցաւ առ Բասիանէն հայե-Ս. Ղեւոնդիոս խօսեցաւ առ զիմանալոյ բանտապանացն» քէն լեզուաւ առ զիմանալոյ բանտապանացն» (— «քանզի կին յազգէ Հայոց էր՝ որպէս եւ վկայքն, թէպէտ եւ յունարէն քաջ զիտէին» կը յաւելու վկայադիրս) եւն: Բասիանէ կը բանտի դռնէն ելաւ, բայց «եզիպտ գիտքի կ'աւանդէր» եւ անկէ տուաւ եւ զնեղ պատուհան բանտին» եւ անկէ տուաւ ջուրը: Վկայքն ի վերջոյ այրեցան, եւ Լիւսիաս հրաման ըրաւ «զոսկերս նոցա արկա-նել ի Գայլ գետ, վեց մղոնաւ հեռի ի քաղա-քէն» եւն: — Կրնայինք աւելցնել քանի մ'օրինակ ալ:

Բայց ի՞նչ կը հետեւի այս ամէնէն: Պարզապէս այն՝ եթէ լաւ կ'ընենք, որ բուն հայ հողի վրայ ալ՝ իրական Փոքր-Հայոց մէջ հայերէնը ծածուկ լեզուի դերք մ'առած էր՝ հանդէպ ամենայն բանի տիրող «Հելլենաց-ւոց» (— Սերաստիան ալ «մասնաւորապէս» հայ հոչակող Հեղինակն քիչ մը միտ դնելու էր նաեւ այս ասութեանց «Հելլենացուց բաղ-մութիւնք» եւն): Այս էր իրականութիւնն արդէն, ամենայն ինչ հոռոմէայունական, պա-տուութեան մինչեւ դարոց եւ եկեղեցի. մինչ կ'երազուի «հայ դպրութիւն յունական տա-ռերով» եւն:

Վերջապէս ահա եզրակացութիւնն ալ Հե-ղինակիս տարօրինակ փաստերուն՝ «Ասոնք կը համարիմ թէ բաւական են հաստատելու թէ հին ժամանակէ ի վեր Առաջին եւ եր-կրորդ Հայոց բնակչաց մեծագոյն մասը, մասնաւորապէս Սերաստացիք, հայ էին, եւ իրենց հին եպիսկոպոսները նոյն ազգէն սե-րած, ինչպէս յայտնի է ծանուցուած առաջին եպիսկոպոսին անունէն, որ կը կոչուէր Մե-րուժան» եւն (էջ 49): Թողունք այս վեր-ջինը, թէ եւ դէռ չէր ըլլար եթէ Մերուժանի մասին աչքէ անցուցած ըլլար քիչ մ'ալ ուրիշ գիտնոց զրաճները, օրինակ՝ նշանաւոր Գիւ-լէնի յօդուածը<sup>5</sup>: Թողունք զարձեալ որ Հե-ղինակիս այս «մասնաւորապէս» հայ հոչա-կուած քաղաքը զարմանալի քաղաք մը պիտի ըլլայ, քանի որ իւր գիտցած Սերաստիան ըլլայ, քանի որ իւր գիտցած մը (տես քիչ է՛ մեր փնտռածը, այլ ուրիշ մը (տես քիչ մ'ետքը): Գոնէ լաւ է որ հոս հայութիւնը քիչ մ'ամփոփուած է՝ Ա. եւ Բ. Հայոց մէջ — որոնք այս յորջորջանք առին միայն Գիսկի-տիանու օրերէն ի վեր — եւ քիչ մը տեղ թո-ղուցած է նաեւ Գամրաց ու Պոնտականաց, որոնք վերջապէս օգեղէն չէին: Բայց իրօք եւ լրջօրէն կը պնդուի թէ օրինակի համար թէոզոսեան Բ. Հայք՝ Մելիտենէնէն մինչեւ կատաւոնիոյ խորքերը՝ ցկոկիտոն — Կոմանա, «մեծագոյն մասամբ» Հայք էին: Պահ մը կատակածեցանք թէ Հեղինակին ականջը բան մը հասած ըլլալու էր, այն խնդիրը թէ հնութեան խորին զարբերուն կատաւոնացիք՝ թիրեւս նախահայ տարր մ'եղած ըլլան: Բայց զուր փնտռեցինք այսպիսի խնդրոց հետք մը: Հեղինակն այս ամէնը լիովին կ'անտեսէ, եւ

<sup>5</sup> Գրուած 1905ի, հայ թրգմ. ՀԱ., 1910, էջ 268 — 271:

<sup>4</sup> Հմմտ. Հ. Մ. Աւգերեան, «Լիակատար վարք» եւն, Վենետիկ 1810, էջ 351—357. նաեւ այլուր:

աւելի հող ունի զբաղելու այս խնդրով թէ «գլխոյն հարաւոյ» (Մատթ., ԺԲ., 42) եւ «տիկինն Սարայ» (Գ. Թ. Ժ., 1) արդեօք մեր «Ծովագ» թագուհին էր եւն եւն (էջ 494—495)։ Իր պնդածն է պարզ՝ նաեւ պատմութեան շրջանին, Գամրաց ու Հոռոմայեցոց օրով, այս ամէն աշխարհք «մեծագոյն մասամբ» հայ էին՝ Արամէ ի վեր անշուշտ։ Որչափ ալ երկար ըլլայ զբաղել այսպիսի տարօրինակ խնդրով, կը շատանանք յառաջ բերել միակ հեղինակ մը՝ որ իրական հմուտ է այս երկիրներուն եւ ճիշդ միջին ժամանակ մըն է իւր ապրած ատենը (63 Ն. Ք.—19 Յ. Ք.), այն է Ստրաբոն, որուն տեղագրական նկարագրութիւնքն ուղղակի հրաշարի կերպով ճշգրիտ կը գտնէ դարուս «Փոքր Ասիոյ նոր Ստրաբոնը»<sup>6</sup>։ Չմոռնանք որ Աղիւսէ վար նստած կ'ըսեն հին գլխաւորարար երկու ազգ՝ Բագատաւոնացիք եւ Կատաւոնացիք, եւ թէ այս վերջինքս կը տարածուէին մինչեւ Եկեղեց, զոր սակայն առին Հայք ասոնցմէ, ինչպէս Սաղիւսներէ եւ Մոսիւնէկներէ՝ Կարինն ու Դերջանը, որով իւր ժամանակ հայ գաւառները «համարեալ» հայախօս եղած էին (տես վերը. յետոյ ալ կ'անդրադառնանք)։ Գանք այժմ Գամրաց։ «Կապաղազովկիա, կ'ըսէ Ստրաբոն, շատ մասերու բաժնուած է եւ գանաղան փոփոխութիւններ կրած։ Մանաւանդ անոնք որ համարեցու են (Գամրաց լեզուն կը խօսին) սահման ունին հարաւէն Կիլիկեան կոչուած Տաւրոսը, արեւելքէն՝ Հայաստան, եւ Կոգիս եւ միջանկեալ այլեայլ լեզուներով ազգերը (— Պոնտականք, ի հարկէ նաեւ «Հայաքաղիւրք», թո՛ղ Փոքր-Հայքը —) հիւսիսէն. Եւքսինոս մինչեւ Հալիսի բերանը, եւ արեւմուտքէն՝ Պարիզագոնիացոց եւ Գաղատացոց ազգերը՝ որոնք Փոնտիկա նստած են, մինչեւ Լիկաւոնացիքն ու Կիլիկեցիքն՝ որ լեռնային Կիլիկիան կը բնակին։ Անոնց մէջ՝ որոնք նոյն լեզուն կը խօսին, Կատաւոնացիքն ի սկզբանէ վեր անջատ եւ Գամրացիներէ տարբեր ժողովուրդ մը կը նկատուին. եւ ազգաց թուահամարին մէջ Կապաղազովկիայէ հոք կը հաշուէր Կատաւոնիա, յետոյ Եփրատ եւ անդին եզոզ ազգերը. այնպէս որ Մեդիտեմէն ալ Կատաւոնիայի կը համարուէր եւ մինչեւ Կոմագենէ կը հասնի։ Բայց Մեդիտեմէն Կապաղազովկիոյ տասներորդ մասն է, երկրին տասն կուսակալութեանց բաժնուե-

<sup>6</sup> Ramsay, Historical Geography of Asia Minor, London 1890, եւ բազմաթիւ գործեր։

լէն վեր։ Վասն զի Արքեղայոսէն յառաջ արքաները նորագոյն ժամանակներս այսպէս բաժնած են Կապաղազովկիոյ պետութիւնը. եւ Մեդիտեմէն՝ Կատաւոնիոյ հետ՝ այս տասն մասերուն մէկն է<sup>7</sup>։ Իմ ժամանակս, կը շարունակէ Ստրաբոն, այս երկուքին իւրաքանչիւրն ալ իւր յատուկ կուսակալն ունէր։ Բայց սրովհետեւ ասոնց եւ Գամրաց մէջ ո՛չ լեզուի եւ ո՛չ սովորութեանց որեւէ տարբերութիւն կայ, իրենց ցեղային տարբերութեան հետեւեքը զարմանալի կերպով բոլորովին անհետացած են։ Թէպէտ բաժնուած էին՝ բայց Արիարաթէս՝ Գամրաց առաջին թագաւորն՝ իւր պետութեան հետ միացուց»։ Այս հին մեծ Կապաղազովկիան, կ'ըսէ Ստրաբոն, արդէն Պարսիկը երկուքի բաժնած էին եւ Մակեդոնացիք թողուցին որ «սատրապութիւնք թագաւորութեանց փոխուին, որոնց մին՝ ընդ Կապաղազովկիա, նաեւ Կապաղազովկիա Տաւրոսի կամ Մեծ Կապաղազովկիա կը կոչուէր. միւսը՝ Պոնտոս կամ Կապաղազովկիա Պոնտոսի։ Մեծ Կապաղազովկիոյ արդի բաժնուածը չենք գիտեր. վասն զի Արքեղայոսի մահուանէն հոքը Կայսրը (Տիրեր) եւ Ծերակոյտը վճուեց որ հոռոմէական նահանգ ըլլայ։ Արքեղայոսի եւ նախորդաց ժամանակն երկիրն՝ ինչպէս ըսուեցաւ՝ տասն կուսակալութեանց բաժնուած էր, որոնց հինգը Տաւրոսի ոտքը կ'ընան՝ Մեդիտեմէն, Կատաւոնիա, Կիլիկիա (— ճիշդ Մատակայ կամ Կեսարիոյ գաւառը —), Տրանիտիս («Անահատական»՝ Տրանա) եւ Գարսաւրիտիս. միւս հինգը՝ Լաւանոնէն, Սարդարաւսէն, Սարաւսէն, Քամաննէն, Մորիմէնէ։ Արքեղայոսէ յառաջ եզոզ արքայից երկրին վրայ աւելցուցին Հոռոմայեցիք մետասաներորդ կուսակալութիւն մ'ալ, Կիլիկիոյ մասն՝ Կատաւոնացիքն եւ Կիլիկիա-արայի շրջակայքն մինչեւ Դերբէ, որ Անտիպատեր աւազակին կը վերաբերէր։ Իսկ Արքեղայոսի տուին նաեւ լեռնոտ Կիլիկեան Երեւոյի շրջակայքն եւ ծովահինաց բոլոր նեղ հովիտներ, որոնց մէջ կ'ընայ նաեւ Կոմանա եւ Ենիւոյի մեհեանը՝ զոր Մայի մեհեան կ'անուանեն... բնակիչները Կատաւոնացիք են... սակայն աւելի քրմապետին կը հնաբանչիւր դաւառի եւ քաղաքի վրայ, ի միջի այլոց՝ «քաղաք մը չունի՝ ո՛չ Կատաւոնիոյ

<sup>7</sup> Հերոդոտի ատեն՝ Ա., 72 եւ Ե., 52 եւ նաեւ յետոյ Կատաւոնիա՝ Կիլիկիոյ կը վերաբերէր։

դաշտավայրն եւ ո՛չ Մեդիտեմէն, բայց ամուր բերդեր լեռներու վրայ՝ Ագամորա եւ Դաստարկում, զոր կը պատէ Կարմարոս գետը» են։ Առանձինն ընդարձակ է բնականապէս «այսպէս կոչուած Կիլիկիոյ մէջ Մատակ, երկիրն մայրաքաղաքը. նաեւ Եւսերիա կը կոչուի վերագրովս՝ առ Արգիւսի» են («Կեսարիա» կոչուեցաւ՝ Ստրաբոնէ քիչ հոքը), թէ տեղը շատ յարմար չէ են. թէ «շատ նեղուցան հայազգի Տիգրանէն՝ երբ Կապաղազովկիա արշաւեց. վասն զի զիրենք ամէնքը փոխադրեց Միջագետք եւ Տիգրանակերտ քաղաքը մեծաւ մասամբ իրենցմէ բնակեցուց. բայց յետոյ՝ Տիգրանակերտի առնուելէն հոքը՝ կը ցոյցը դարձաւ» են։

Կարծենք՝ կը բաւէ ասի։ Պոնտոսի մասին ալ նոյնքան ընդարձակ է Ստրաբոն (ԺԲ., 1—37 են)։ Կը բաւէ յիշել միայն թէ «Միհրդատ Մեծի՝ Պոնտոսի գահ ելլելու ատեն՝ այս թագաւորութիւնն ունէր բոլոր երկիրն այս թագաւորութիւնն ունէր բոլոր Տրեմա-Աղիւս գետոյ արեւելակողմէն մինչեւ Տրեմա-Աղիւս գետը աշխարհն եւ մինչեւ Հայոց սահմանները, եւ միւս կողմէ՝ այսինքն Աղիւսի արեւմտակողմը՝ մինչեւ ցլմաստրիս ի Պարիզագոնիա։ Միհրդատ տէրութեան աւելցուց դադոնիա։ Միհրդատ տէրութեան աւելցուց ձեռակղէս, եւ դէպ ի արեւելք ամբողջ ծոռ-վեդերը մինչեւ ի Կողքիս ու Փոքր-Հայք։ Վեդերը մինչեւ ի Կողքիս ու Փոքր-Հայք։ Միհրդատի մահուանէ հոքը Պոմպէոս գրաւեց երկիրը։ (Փոքր-Հայոց եւ Կողքիս մասերը բաժնեց մանր իշխաններու, որոնք օտնական եղած էին իրեն Միհրդատոյ պատենական եղած էին իրեն Ստրաբոն, ԺԲ., 3, 1)։ Բազմաց ատեն» են (Ստրաբոն, ԺԲ., 3, 1)։ Կը Փոքր-Հայոց մասը յետոյ պիտի յիշենք։ Կը կարծենք թէ չէին պակսեր միջոցներ՝ իրեն ինչպէս որ պէտք է ուսուցնասիրելու համար<sup>8</sup>. եւ կարծենք թէ նոյն իսկ կը բաւէին շատ բաւական անոնք՝ զորոնք մենք ձեռքարկած էինք հայերէնի վերածելու<sup>9</sup>։ Կը կրկինք՝ բոլորովին տարբեր խնդիրներ են թէ արդեօք ինչ բնակչութիւն ունէր հին Կապաղազովկիա, թէ ինչ կապ ունէին անոնք (յատկապէս Հայք) ապագայ Հայոց հետ, թէ

<sup>8</sup> Կը բաւէ յիշել՝ Th. Reinach, Mithridate Eupator, Paris 1890. Գրածք՝ նոյն, Trois Royaumes d'Asie Mineure, Paris 1889, եւ այլ անթիւ գործեր. օրինակ՝ M. Girard, Le Djanik etc., I—II, Louv. 1907 են։  
<sup>9</sup> Յիմմերէրի «Գամրաց»՝ ՀԱ., 1900, էջ 214, 33, 110, 129, 211, 225. Եւ «Պոնտական Ուսուցնասիրութիւնք»՝ Ա. եւ Բ., 1909 են։

նոյն իսկ նորամուտ Գամիրք ինչ աղերս ունին՝ նոյն իսկ լեզուի մասին (մերձաւոր էր հայերէնի, ինչպէս կան պնդողք), եւ այսպիսիք։ Բայց ուրիշ բան է պատմական ժամանակի Գամիրքն ու Պոնտականք չիթիլ Հայոց հետ, հսկայ «Փոքր-Հայք» տեսնել՝ որ չկար այն դարերուն։

Կը թողունք Հեղինակիս պատմականքը. որոնք — քանի որ նոյն իսկ հիմը՝ աշխարհագրականն՝ ա՛յնպէս չիթիլ է, անշուշտ յաճախ բոլորովին ուրիշ գոյն կ'առնու, եւ տեղ տեղ բաւական ալ զարմանալի է դարձեալ։ Կը բաւէ միակ կէտ մը. Չարեհի թագաւորութիւնը (190էն հոքը) միւս Հայաստանէն «նուազ ըլլալուն համար կոչուեցաւ Փոքր-Հայք»։ Ասի թէ եւ այս միջոցիս շատ ճիշդ չէ. որովհետեւ Ծովագ թագաւորութեան հետ՝ որովհետեւ Ծովագ թագաւորութեան հետ՝ այս միջոցիս արդէն կար իրական «Փոքր-Հայքը». բայց վերջապէս հնագոյն ժամանակի համար կ'արժէ։ Բայց այս անուանակոչութիւնն իսկ կը ցուցնէ թէ Հեղինակը տարբեր իմաստով գրած է. «Այս իշխանութիւնը կ'ըսէ, կը փակէր իր մէջը զբեթէ Սորենացոյն Գ. եւ Դ. Հայք անուանած երկու գաւառներն, այսինքն՝ Մեդիտեմէն իւր շրջակայքն եւ Սարբերդի այժմեան գաւառին մեծ մասն, որ Եփրատէն անդին է, եւ ուրիշ տեղերով որ հին Ծովագէն շատ տարբեր չէր»։ Կը բաւէ պարզ դիտողութիւն մը. արդէն 286ին Ն. Ք. Գամիրք տիրած էին Կատաւոնիոյ եւ Մեդիտեմէնի, եւ պահեցին։ Չուր է նոյն եւ Մեդիտեմէնի, եւ պահեցին։ Չուր է նոյն Գամիրք-Հայք» փնտուել հոս այս միջոցներուն. իսկ «Գ.» Հայք այս շրջանին՝ ճաշակի խնդիր կը համարինք, թէ եւ անժամանակութիւն մըն է. եթէր զարու տարբերութեամբ։ Սակայն արդէն ա՛յս է Հեղինակիս ամբողջ պատմագրութեան կերպը, որ անով լիովին խառնակ կերպարանք առած է յաճախ։ Օրինակ կը յիշէ Գամրաց վերջին արքայի՝ Արքեղայոսի իշխանութիւն — զոր քիչ մը յառաջ զրինք ըստ Ստրաբոնի այսպէս՝ «Իր իշխանութեան ներքեւ ունէր Փոքր-Հայոց հարաւային մասը կամ Մալաթիոյ գաւառն, որ Երկրորդ Հայք նաեւ Փոքր-Հայք կը կոչուէր, Կապաղազովկիան, Լիկայոնիան» են։ Ի հարկէ երբ «Փոքր-Հայք» ա՛յնպէս կ'ըմբռնուի, արդէն ինքնին կը հետեւի թէ «Փոքր-Հայոց» պատմութիւն մը պիտի գրուէր՝ որ իրականին աւելի զամբական ու պոնտական է՝ խառնակուած հայկականին հետ։ Բայց թողունք պատմութիւնը, որ պէտք է ծայրէ ծայր սրբա-



կազմեց: — Այս է մեր խնդրոյն ներքեղող քաղաքը, ուստի Մեքալուպոլիս-Մեքաստիա, ո՛չ Կապիրա-Մեքաստէ-Նէպիտարիա, առաջինն՝ արդէ Սիւլիպո, վերջինն՝ արդէ Նիկասար»:

Քանի մը խօսք ալ Մեքաստուպոլսոյ մասին: Այլեւայլ անորոշ ու չիտթ խօսքերէն ետքը (համառ. նաեւ «Չէյլեան Մեքալուպոլիս», էջ 525) կը գրուի՝ «Նոյնպէս Մեքաստուպոլիս մէկէ աւելի էր... երրորդը մեր խնդրածն է, նոյնպէս Փոքր Ասիոյ մէջ Կապապոլիս, կամ ինչպէս Պտղոմէոս կ'ուզէ (Ե. դ.) Պոնտոս Կապապոլիսոյ մէջ, եւ Պլինիոս (Չ. դ.) Կապապոլիսոյ Կոլորենէ գաւառին մէջ: Անտոնիոսի ճանապարհացոյց մատենան կը նշանակէ այն ճանապարհին վրայ՝ որ Տաւրայէն կ'երթայ Մեքաստիա քաղաքը, Դարանիա եւ վերին աւանաց մէջ» եւն (— այս դժի մասին տես Անդերսըն, «Պոնտ. Ուսումն», Ա., § 12—13): Կը վերջացնէ թէ Մեքաստուպոլիսը «կը յարմարընեն ոմանք Թուրսալի հետ... այլք Սուլուսէրայի հետ որ աւելի յարմար կը թուի» (էջ 526): Ճիշդն է վերջինս, Թուրսալ ըլլալով հին Իբորա: Պլինիոսի խօսքը պէտք չկայ խիստ մտօք անուշ, որով Մեքաստուպոլիս ալ Կոլորպենէի մէջ գնել. խօսքին իմաստն է աւելի թէ ի Կոլորպենէ Մեքաստիոյ հետ նաեւ Մեքաստուպոլիս միաժամանակ հիմնուեցան Աւգոստոսէ եւ «Մեքաստէ» անունն առին (տես «Պոնտ. Ուսումն», Ա., § 16. Բ., § 14): Մեքաստուպոլիս՝ նաեւ Հեքալիդուպոլիս, վերահիմարկութիւն մըն էր հին Կարանա գիւղին որ յառաջ ենթարկեալ էր Չելայի, եւ յետոյ այն մանրապետութեան մէջ էր՝ զոր Հռոմայեցի կայսերք շնորհած էին գաղատական չորրորդապետական տոհմէ Ատեպորիքս իշխանին, որուն մահուանէն ետքը (3/2 Ն. Ք.) այս իշխանութիւնը կցուեցաւ՝ իբր հռոմէական գաւառ՝ Գաղատական Պոնտոսի: Մինչդեռ Պոզեմոնականն՝ իւր Կոլորպենէով՝ իբր մանրապետութիւն մնաց տակաւին կէս դարէ աւելի (մինչեւ 63 Յ. Ք.): Գաղատական Պոնտոսի կը վերաբերի նաեւ Կոմանա Պոնտաց-տացոյ՝ հին մեհենատեղին, մեհենիւ, պաշտամարք եւն նման Գամրաց Կոմանայի, որոնց երկուքին պաշտամանց նմանութիւնը Հայոց պաշտամանց հետ կը շեշտէ Սարաբոն, թէպէտ եւ աւելի Չելայի մեհենանը նուիրուած էր, կ'ըսէ, Անահայ, «այն է տիկնոջ՝ զոր

պաշտեն եւ Հայք». բայց Կոմանա էր նաեւ «երեւելի վաճառաչահ քաղաք եւ մին ի գլխաւոր վաճառացն եկեղոց ի Հայոց» եւն (Սարաբոն, ԺԲ., 3, 32—37): Հոս ալ էր նոյն քրմապետութիւնն («երկրորդ յետ թագաւորին») եւ նոյն մեհենատեղաց զրուութիւնը: Մեհենական կալուածքին՝ «նուիրական երկրի» (Սարաբոն) մաս էր Դագիւմնիտիս (արդէ՛ Կաղ-Օվա, Դագիւմնի՛ Եւզոկիա, արդէ՛ Թուրսալ), նաեւ Հռոմէացոց ժամանակ քրմա-իշխանի ներքեւ էր, եւ վերջին քրմիշխանի՝ Դիւտեւոսի՝ մահուանէ ետքը (34/35 Յ. Ք.) հռոմէական գաւառ եղաւ եւ Գաղատականին անցաւ: Կ'երեւայ թէ, կ'ըսէ Կիւմոն (անդ, Բ., § 14) Տրայիանոս՝ որ Գաղատական Պոնտոսը կցեց վերախաղմեալ Կապապոլիսի նահանգին, առանձնապէս կարեւորութիւն տուած է Մեքաստուպոլսոյ՝ ընելով զայն հռոմէացման կենդրոն մը տակաւին կէս-բարբարիկ երկրին, եւ այս ատենէ կը սկսի քաղաքին դրամահատութիւնը: Յամենայն դէպս մեծ ծաղկում ունեցած է, եւ վկայ են հոս գտնուած արձանագրութիւնքն, որոնց մին (Թ. 290) կարեւորագոյնն է՝ տալով պայծառ գաղափար այս կողմանց քաղաքաշխական եւն կազմակերպութեանց: Չասոնք յիշեցինք անոր համար որ Մեքաստուպոլսոյ շրջանը յետոյ մտաւ արդէն Թէոդոսեան «Ա», իսկ Կոմանայի շրջանը աւելի ուշ՝ Յուստինիանու «Բ» Հայոց մէջ, մայրաքաղաք ունենալով Մեքաստիան: Մանր բանակաթեմերու շրջանին Դագիւմոն կարեւոր դերք մ'ունէր Արմէնիականի մէջ: Իսկ Կոմանա ի սկզբանէ ի վեր կարեւոր հանգրուան մըն էր՝ պետութեան կարեւոր մէկ ուղեգծին: — Կը թողունք միւս ամէն կէտերը:

(Շարունակելի):



### Գ Ի Ո Ն Ե Ս Ի Ո Ս Բ Ե Ր Ս Ե Լ Ի Բ Ի Ի Հ Ա Կ Ե Ժ Ե Թ Ի Թ Ի Ի Ն Ը Հ Ա Յ Ո Յ Գ Է Մ

(Շարունակութիւն եւ վերջ):

ԳԼՈՒԽ Ը.

Հայոց սովորութեանց դէմ:

Հայերը դարձեալ կը հարցնեն մեզի թէ ի՞նչու մեզի պէս խոստովանանք<sup>1</sup> չէք ըլլար: Անոնց կը պատասխանենք. մենք ալ մեր մեղքերու խոստովանութիւն կ'ընենք, բայց ինչ-պէս որ պատշաճ է, եւ ոչ ձեզի պէս պարզեւնեբու փոխան<sup>2</sup>: Խոստովանութիւնն առաջին անգամ Յովհաննէս Մկրտիչ քարոզեց. ուստի մեզի պէս խոստովանելու իւր մեղքերը, որ կը զգջայ ու կը խոստովանի իւր մեղքերը, գովելի է. բայց երբ յետոյ կը դառնայ իւր մեղքին, կ'իյնայ ու կ'ըլլէ՝ կը շինէ ու կը քանդէ շարունակ, եւ կը նմանի շինէ ու կը քանդէ փոխանին կը վերադառնան եւ խոզերու, որոնք դարձեալ կը թաւանան եւ խոզերու, որոնք դարձեալ կը թաւանան իւր տիրմին մէջ<sup>3</sup>: Խոստովանանքը պէտք է լին տիրմին մէջ<sup>4</sup>: Խոստովանանքը կատարուի ճշմարիտ, ինչպէս որ Դաւիթ կատարեց, որ մեղքերը խոստովանելէ ետք՝ կրկին ընդհատեց. այդպէս ըրին նաեւ Մանասէ, մեղքերը կրկին, ու Սիմէոն՝ առաքեալներու զուլը, մաքսաւորները, կրկին ու աւազակը. վասն զի Գիրքը կ'ըսէ. Մի վստահի մեղքի թողութեան վրայ եւ մեղք մեղքի վրայ մի զիցեր<sup>5</sup>: Ուստի կ'ըսենք թէ լաւ է խոստովանանքը, վասն զի «եթէ մեր մեղքերը տովանանքը, վասն զի «եթէ մեր մեղքերը խոստովանինք՝ հաւատարիմ ու արդար է խոստովանինք»<sup>6</sup>: Եւ «ըսի թէ պիտի Աստուած մեզի թողու»<sup>7</sup>: Եւ «ըսի թէ պիտի Աստուած մեզի թողու»<sup>8</sup>: Եւ «ըսի թէ պիտի Աստուած մեզի թողու»<sup>9</sup>: Այն որ կը խոստովանի իւր մեղքերը եւ կը խուսափէ անոնցմէ՝ Աստուած կը

1 Կը գործածէ հայերէն «խոստովանութիւն» բառը: Տես այս կէտին շուրջ Յովհ. Ժ. Բար-Շուրանի Հայոց Կաթողիկոսին գրած թուղթը. վիճակ 1923, էջ 58—59, 85—89: Բարսալիքի տեսած է Բար-Շուրանի գրուած թիւնը, ուստի հոս եւս գաղափարի եւ նախադասութիւններու փոխառութիւններ զգալի են:  
2 Բնագիրն ունի (ԱՅՕՁՁ ՁՁՁ), որ կը նշանակէ «պարզեւնեբու համար» ինչպէս կը հասկնայ Mingana, for a consideration, p. 43. Բայց նաեւ «կատարած ըլլալու համար» կրնայ նշանակել: Բարսալիքի կը գործածէ (ԱՅՕՁՁ ՁՁ) իմաստով:  
3 Բ. Պետր. Բ., 22:  
4 Սիրաք Գ., 29:  
5 Ա. Յովհ. Ա., 9:  
6 Սաղմ. ԼԱ., 5:  
7 Յակ. Ե., 16:

զթայ անոր: Բայց (խոստովանանքը) պէտք է իմաստուն բժշկի եւ փորձառու մարդու առջեւ ըլլայ, որոնք կրնան օգնել: Եթէ սակայն մարդ իւր ցաւերը բժշկին չի յայտնէր՝ կը մնայ անբուժելի: Այն որ բոլոր սրտէ կը ցանկայ բուժուիլ, պէտք է հոգեւոր բժշկին հնազանդի, որպէս զի չուտով բժշկութիւն գտնէ. եթէ սովորութեանէ եւ ոչ եռանդէ մղուած մերձենայ մեղաց խոստովանութեան՝ կը մնայ անբուժելի: Եւ սակայն Հայոց խոստովանանքը սովորութեանէ է եւ ոչ եռանդով, անկից (կը տեսնուի) որ անոնք ստէպ կը խոստովանին եւ անմիջապէս կ'երթան կ'իյնան առաջինէն աւելի դէժ մեղքի մէջ:

Դարձեալ կը հարցնեն թէ երբ պատարակել կ'ուզէք՝ ի՞նչու եկեղեցոյ մէջ ձեռք կը լուար:

Անոնց կը պատասխանենք, թէ այդ եւս խորհրդանշական է. ասոր մասին մար Դիոնիսիոս Բ. ճառին մէջ գրած է, որ քահանան խորհուրդը կատարելէ առաջ մատերուն ծայրը լուարով կը ցուցնէ թէ զեռ ազատ չէ մեղքի անմաքրութենէն. ահա մեծ դոհէն առաջ կը լուայ իւր բոլոր աղտերը, որպէս զի սրբութեամբ քահանայանայ փառաց Տիրոջ առջեւ<sup>8</sup>: Նաեւ խորհուրդը կատարելէ ետք կը լուայ. երբ քահանայական զգեստները կը հանէ՝ կը լուայ ձեռքերը, որպէս զի անվայել բանի չդպչի: Եւ ո՞րն է գովելի մեղք որ եկեղեցոյ մէջ մեր ձեռքերը կը լուանք, թէ դուք որ կերակրոյ եւ պնակին մէջ, ուսկից կ'ուտէք, ձեռք կը լուար:

Գանք հիմայ անոնց ուրիշ մէկ բարբանջանքին: Կ'ըսեն. Ի՞նչու հին ժամանակ Ծննդեան եւ Յայտնութեան տօները նոյն օրը կը կատարէին, եւ դուք կը բաժնէք:

Կը պատասխանենք անոնց. Պահքն ալ առաքեալներու ժամանակ Յայտնութեան տօնէն ետք կը պահուէր, բայց 318երու ժողովին մէջ Չարչարանաց շարթուն հետ կարգեցին. ուստի թողուցէք նոր սովորութիւնը եւ բռնեցէք հինը, դուք որ հիները կը սիրէք: Սակայն առաքեալներու ժամանակ Ծաղկազարդն ու Չարչարանաց շարթը երեսուն տարի մէջ մը կը կատարուէր, ուստի դուք ալ երեսուն տարի անգամ մը տօնեցէք Ծաղկազարդն ու Չարչարանաց շարթը: Բայց առաքեալը կ'ըսէ. Ամէն բան քննեցէք, եւ ինչ որ լաւ է՝ բռնեցէք<sup>9</sup>: Ուստի պատշաճ է նախ

8 Patr. Gr., III, 1, 440, 465.  
9 Ա. Թէս. Ե., 21: